ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» ապրիլի 2025թ. ՆՄՈ/489-Ա

ք. Արմավիր

ԲՆԱԿԱՐԱՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՐԱՆԻ (ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ) ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ԿԱՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ (ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ) ՎԿԱՅԱԳՐԻ ՁԵՎԸ ԵՎ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 20-ի N340-Ն որոշման 3-րդ կետով հաստատված N7 հավելվածի 3-րդ և 4-րդ կետերի պահանջները.

որոշում եմ՝

1. Հաստատել բնակարան ձեռք բերելու համար բնակարանի (բնակելի տան) գնման վկայագրի կամ անհատական բնակելի տուն կառուցելու (կառուցապատումը շարունակելու) վկայագրի ձևը և վավերապայմանները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2025-04-28 16:19:33 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
eID

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2025 թվականի ապրիլի 28-ի
N ՄՈ/489-Ա որոշման

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ N L1 _____

_____
Վկայագրի տրամադրման ամսաթիվը

_____
Անուն, ազգանուն, հայրանուն ծննդյան օր, ամիս, տարի

_____
Անձնագրի կամ նույնականացման քարտի սերիան, համարը, ումկողմից է տրված

_____
Աջակցություն ստացող ընտանիքի անդամների թիվը (թվերով և տառերով)

_____
Տրամադրվող աջակցության չափը (թվերով և տառերով)

Սկիզբ ..... 2025թ. Ավարտ 01.11.2025թ.

Վկայագրի միջոցով բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման, անհատական բնակելի տան կառուցման (կառուցապատումը շարունակելու) հիփոթեքի պայմանագրի կնքման և անհատական բնակելի տան կառուցման (կառուցապատումը շարունակելու) ժամկետը

Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյան

_____
Առորոշություն

Կ. Տ.

Տրված է մեկ օրինակից
Սույն բնակարանի գնման վկայագիրը արժեթուղթ չէ և ենթակա չէ օտարման, գրավադրման, բռնագրավման կամ այլ անձի փոխանցման

Վկայագիրը պարունակում է հետևյալ պարտադիր վավերապայմանները՝

1) վկայագրի թողարկման սերիան (որը կազմվում է համայնքի անվանման առաջին տառը, շենքի համարը և համապատասխան բնակարանը նկարագրող հապավումից (օրինակ՝ Լ1-10) և համարից (գրանցամատյանի հերթական համարը).

2) վկայագիրը տրամադրող մարմնի անվանումը, տրամադրման ամսաթիվը.

3) աջակցություն ստացող անձի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը անձնագրային տվյալները.

4) տրամադրվող աջակցության չափը.

5) վկայագրի միջոցով բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման (առուվաճառքի պայմանագրի կնքման) ժամկետը.

6) վկայագրի միջոցով անհատական բնակելի տան կառուցման (կառուցապատումը շարունակելու) հիփոթեքի պայմանագրի կնքման և անհատական բնակելի տան կառուցման (կառուցապատումը շարունակելու) ժամկետը:

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

28.04.2025

VERIFIED OCSP 28.04.2025 15:46:45 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023